

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

ԳԱՆԻ ՄԸ ՇԱՐԹԱՊԱՀ ՌՈՒՍԱՅ ՀՐԵԱՅ ԳԱՌՆԱԼԸ .

Յայտնի է որ Ռուսաց մէջի տեսակ տեսակ աղանդներուն մէկն ալ շարքարարահ (субботникъ) ըսուած ռուսներուն աղանդն է, որով հրէութեան բոլոր գլխաւոր օրէնքներն ու սովորութիւնները կպահեն, թէպէտեւ քրիստոնէական հաւատքէն ալ շատ բան կընդունին: Արդ մօտերս սոցա մէջէն տասը տնուորի չափ գնացեր են Պետարապիայէն Կամենից, եւ այն տեղը բոլորովին հրեայ գարձեր են: Արդէն Հրէից գլխաւոր աղօթքները եւ ծէսերը գիտեն եղեր, ինչպէս որ

ըսինք. ուստի շատ գիւրին եղեր է նոցա բոլորովին հրէանալը: Կարգացողը ինքնին կրնայ մակարերել Կամենիցու բուն հրեաներուն այս բանիս վրայ ունեցած ուրախութիւնը, եւ իրենց նորագարձ եղբայրներուն ցուցուցած հիւրընկալութիւնները:

— Չեմք կարծեր որ նոյնչափ եղբայրութեան եւ ուրախութեան նշաններու հանդիպին իկողմանէ կաթոլիկաց Մարաշի այն Հայերը՝ որոնց համար անցեալները ձայն մը կար թէ լատինանալ կուզեն . . .

ՄԱՔՍԻՄԻԼԻԱՆՈՍ Բ, ԱՐԳԱՅ ՊԱՒԱՐԻՈՅ .

Պաւարիոյ Մաքսիմիլիանոս Բ թագաւորը վախճանեցաւ փետրուարի 27-ին, կարճ՝ բայց սաստիկ հիւանդութեամբ: Ծնած էր Միւնիք (Մոնաքոյ) մայրաքաղաքը 1811-ին, ուստի 52 տարեկան էր. 1848-ին՝ երբ իւր հայրը Լուդովիկոս-Օգոստոս հրաժարեցաւ աթոռէն, Մաքսիմիլիանոս տեղն անցաւ: Այժմ՝ յաջորդեց իրեն մեծ որդին Լուդովիկոս Բ, որ ծնած է 1843-ին:

Մաքսիմիլիանոս թագաւորը Գերմանիոյ այժմու խռովութեանը մէջ այսքան միայն

մասն ունեցաւ, որ Աւստրիոյ ու Փրուսիոյ բռնած ընթացքին դէմ կենալու յորդորեց Գերմանիոյ միւս մանր տէրութիւնները, եւ կուզէր որ Աւկուսթէնպուրկի իշխանը օրինաւոր դուքս ճանչցուի Շլէսվիկի ու Հոլշթէյնի:

Աշխարհատես եւ ուսումնասէր թագաւոր էր Մաքսիմիլիանոս, եւ մեծ պաշտպանութիւն կընէր ուսումնականոց եւ ամէն տեսակ գովելի յառաջադիմութեան, ուստի եւ սիրելի էր իրեններուն ու օտարաց:

ՍՈՒՆԿԵՐՈՒՆ ՈՅԺԸ .

Սունկը (մանրարը) եւրոպայի շատ կողմերը կշատցընեն շտեմարաններու (մադագաներու) մէջ: Անգղիոյ շտեմարաններէն մէկը քանի մը տարիէ իվեր փակ մնացեր է եղեր. մէջը այնքան շատցեր են սունկերն որ գուռը բոլորովին գոցուեր է: Կոտրեր են

գուռն որ ներս մտնեն. տեսնեն որ աճած սունկերուն ուժովը պարապ տակառ մը մինչեւ շտեմարանին առիքին բարձրացեր է: Ուրիշ տեղ մը նոյնպէս սունկերուն ուժովը գետնէն վեր վերցուեր է 85 ֆունթ ծանրութեամբ քար մը .